ՀՀ ԳԱԱ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ
ՀՐԱՆՏ ՀԵՆՐԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հրանտ Հենրիկի Մաթևոսյանը ծնվել է 1947 թ. հուլիսի 10-ին Երևանում: 1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, մասնագիտացումը՝ պլազմայի ֆիզիկա: 1977 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 1997 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

Հ. Մաթևոսյանը 2011–2021 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար: Նա ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» տնօրենն է, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տեսական ֆիզիկայի բաժնի վարիչը:

2021 թ. հունիսի 28-ին Հ. Մաթևոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ փոխնախագահ:

2018 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Հ. Մաթևոսյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել ՀՀ ԳԱԱ օրհներգի (խոսք՝ Կարո Վարդանյանի, երաժշտությունը՝ Արամ Սաթյանի) ստեղծման գործում, որի պրեմիերան տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ՝ 2013 թ. հոկտեմբերի 14-ին, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ, Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բարեկամ Հ. Մաթևոսյանն իր գիտակազմակերպական կյանքի ընթացքում սերտ շփումներ է ունեցել արվեստի աշխարհի ներկայացուցիչների, մասնավորապես՝ նկարիչների հետ: Նրանցից շատերն իրենց ստեղծագործությունները նվիրել են Հ. Մաթևոսյանին՝ ստեղծելով ու հարստացնելով նրա անձնական հավաքածուն: Հ. Մաթևոսյանի անձնական հավաքածուի մեջ են Մինաս Ավետիսյանի, Հարություն և Արմինե Կալենցների, Ռոբերտ Էլիբեկյանի, Վարուժան Վարդանյանի և Կառլոս Աբովյանի վրձնած կտավները:

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼԻ ԻՇԽԱՆՅԱՆ



Արթուր Միքայելի Իշխանյանը ծնվել է 1960 թ. մայիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Շոշ գյուղում: 1983 թ. ավարտել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտը: 1983–1986 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թ. ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 2004 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. Իշխանյանի գիտական գործունեության բնագավառներն են՝ ատոմական, մոլեկուլային և օպտիկական ֆիզիկա, մակերևութային ֆիզիկա, քվանտային սակավավիճակ համակարգեր, գերսառը ֆոտո և մագնիսաասոցիացիա, ոչռելյատիվիստական և ռելյատիվիստական ալիքային հավասարումներ, ոչգծային ֆիզիկա, մաթեմատիկական ֆիզիկա, Հոյնի ֆունկցիաների տեսություն:

1994-2005 թթ. Ա. Իշխանյանը եղել է ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի գիտքարտուղար, 2005–2006 թթ.՝ ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար: 2007 թ. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի «Նյութական ալիքների ֆիզիկայի» լաբորատորիայի վարիչն է:

Ա. Իշխանյանը ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր է (2015):

* * *

Հունիսի 29-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լենսեր Աղալովյանը**: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ռադիկ Կոստանյանը**: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ռուբեն Հարությունյանը**: ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Լևոն Թավադյանը**: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ **Ռադիկ Մարտիրոսյանը**, **Աշոտ Մելքոնյանը**, **Գեղամ Գևորգյանը**, **Գագիկ Ղազինյանը**, **Գևորգ Պողոսյանը**, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ **Արսեն Հախումյանը**, **Վազգեն Մելիքյանը**:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանի առաջարկությամբ ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը** դարձավ ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս **Յուրի Շուքուրյանը**՝ ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական:

ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

Յուրի Միքայելի Սուվարյանը ծնվել է 1943 թ. հունիսի 25-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1965 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա: 1970 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 1983 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: Նրա գիտական գործունեության բնագավառներն են՝ մակրոտնտեսագիտություն, կառավարման տեսություն, ռազմավարական կառավարման մեթոդաբանություն, հանրային կառավարման տեսություն և պատմություն, հայ կառավարչական մտքի պատմության հիմնախնդիրները: Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների, այդ թվում շուրջ 50 մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների: Յու. Սուվարյանը ավելի քան 70 թեկնածուական և 8 դոկտորական ատենախոսությունների գիտական ղեկավար և խորհրդատու է:

Յու. Սուվարյանն աշխատել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության և ՀԽՍՀ պետպլանի տնտ/գիտ և պլանավորման գ/հ ինստիտուտում՝ թեմայի ղեկավար (1966-1988, համատեղության կարգով), ԵՊՀ Ժողտնտպլանավորման և ճյուղային էկոնոմիկաների ամբիոնում որպես ասիստենտ (1968-ից), ապա՝ ավագ դասախոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում դոցենտ (1975-ից), պրոֆեսոր (1984-ից), պրոռեկտոր գիտական աշխատանքների գծով (1987-1994), Կառավարման ամբիոնի վարիչ (1994-2011), ռեկտոր (2006-2011): 2011 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, նույն պաշտոնում վերընտրվել 2016 թ. և 2021 թ.:

Յու. Սուվարյանը երկար տարիներ ղեկավարել է ՀՊՏՀ-ում գործող գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհուրդը, եղել «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիրը (2006-2011), հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների, Հայերենի բարձրագույն խորհրդի անդամ:

Յու. Սուվարյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի (2011), ՀՀ Ազգային ժողովի «Պատվո մեդալ» (2013) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2017) շքանշանով: 2014 թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: